ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի առաքման ժամանակ գների ձևավորման կարգի վերաբերյալ 2013 թվականի դեկտեմբերի 2-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետև՝ Կողմեր,

հիմնվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի առաքման ժամանակ գների ձևավորման կարգի վերաբերյալ 2013 թվականի դեկտեմբերի 2-ի համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) 5-րդ հոդվածի դրույթների վրա,

ընդունելով էներգետիկ շուկաների և գազատրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման կարևորությունը, ինչպես նաև գազամատակարարման հուսալիության ապահովման անհրաժեշտությունը,

ելնելով Հայաստանի Հանրապետության տնտեսության համար համակարգաստեղծ ձեռնարկության՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (նախկինում՝ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերություն) (Հայաստանի Հանրապետություն) կայուն տնտեսական վիճակի պահպանման շահերից,

հաշվի առնելով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության գործունեության մեջ Կողմերի պետությունների փոխադարձ շահագրգռվածությունը,

հաշվի առնելով Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին 2015թ. սեպտեմբերի 7-ին, 2016թ. մարտի 10-ին, 2016թ. ապրիլի 7-ին և 2016թ. դեկտեմբերի 30-ին ստորագրված արձանագրությունները,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրի 2-րդ հոդվածում.

ա) իններորդ պարբերության մեջ «2017թ. դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «2018թ. դեկտեմբերի 31-ը» բառերով:

բ) տասներորդ պարբերության մեջ «(բացառությամբ 2015, 2016 և 2017 թվականները)» բառերը փոխարինել «(բացառությամբ 2015, 2016, 2017 և 2018 թվականները)» բառերով:

Հոդված 2

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից կամ 2018 թ. օգոստոսի 2-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին 2013 թվականի դեկտեմբերի 2-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվից՝ կախված նրանից, թե նշված ամսաթվերից որն ավելի ուշ կգա:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2018 թ. օգոստոսի 2-ին երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում, երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝	**Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից՝**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018թ. օգոստոսի 2-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի առաքման ժամանակ գների ձևավորման կարգի վերաբերյալ 2013 թվականի դեկտեմբերի 2-ի Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող հայերեն բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ՝

Սաթենիկ Աբգարյան